ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ս/թ. ապրիլի 17-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ 1973—1974 ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի շրջանավարտ յոթ սարկավագների ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը և մասնավոր հրավիրյալներ:

Հանդիսությունը բացում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավ. քհն. Մարուքյանը:

Քննիչ հանձնաժողովի անդամները տեղ են գրավել մասնավոր սեղանի շուրջ:

Սկսվում է ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը:

Ավարտաճառերը քննող հանձնախումբը, որի կազմում էին տ. Վահան եպս. Տերյանը (նախագահ), հոգևոր ճեմարանի դասախոսներ պրն. պրն. Արթուն Հատիտյանը, Պարգև Ծահբազյանը և Սամվել Անթոսյանը, նախապես առանձին ու հանգամանորեն ընթերցել էին ավարտաճառերը և իրենց գնահատականներն ու դիտողությունները ներկայացրել՝ ճեմարանի տեսչի գլխավորությամբ ապրիլի 14-ին գումարված ժողովին՝ ընդգծելով յուրաքանչյուր աշխատանքի առավելություններն ու թերությունները:

Ամսի 17-ին, հինգշաբթի օրը, հանդիսավոր իրադրության մեջ, շրջանավարտները հանդես են գալիս իրենց ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ: Յուրաքանչյուր շրջանավարտ սարկավագ նախ համառոտակի ներկայացնում է իր աշխատությունը, խոսում իր օգտագործած աղբյուրների մասին և ապա պատասխանում քննիչ հանձնաժողովի և ներկաներից ոմանց հարցերին:

Ընդմիջումից հետո քննիչ հանձնաժողովն արձանագրում է հետևյալ գնահատականները՝ շրջանավարտ սարկավագների ավարտաճառերի բանավոր պաշտպանության մասին.

Սարգիս սրկ. Քյոսամանուկյան. ավարտաճառի թեման՝ «Հայ միջնադարյան առակագրությունը և առակների կրոնական հենքը». «գերազանց».

Քերոբ սրկ. Արթինյան. ավարտաճառի թեման՝ «Հայ մշակույթի վերազարթոնքը 10-րդ դարում». «լավ».

Գրիգոր սրկ. Զմրուխտյան. ավարտաճառի թեման՝ «Ֆրիկի խրատա-բարոյական առակները». «լավ».

Վաչե սրկ. Նալբանդյան. ավարտաճառի թեման՝ «Հրաչյա Աճառյանի կյանքն ու գործունեությունը». «լավ».

Հակոբ սրկ. Զմրուխտյան. ավարտաճառի թեման՝ «18-րդ դարի հայ ազատագրական շարժումները և հնդկահայերի մասնակցությունը». «բավարար».

Հարություն սրկ. Սարգսյան. ավարտաճառի թեման՝ «Խրիմյան Հայրիկի մանկավարժական գործունեությունը». «բավարար».

Նշան սրկ. Մանուկյան. ավարտաճառի թեման՝ «Առաքել Դավրիժեցու «Հայոց պատմություն»-ը». «բավարար»:

Այնուհետև Մայր Աթոռի ծառայության կանչված շրջանավարտ սարկավագներին Իր հայրական պատգամն ու օրհնությունն է տալիս Վեհափառ Հայրապետը՝ այս առթիվ հայտնելով նաև Իր սրտի գոհունակությունն ու ուրախությունը:

Շրջանավարտները ծափողջույնների ներքո Վեհափառ Հայրապետից աջահամբույրով ստանում են ճեմարանն ավարտելու մասին վկայականները և նվերները:

Սույն հանդիսությունն ավարտվում է Տերունական աղոթքով և «Պահպանիչ»-ով: